



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16139

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունվարի 16-ի թիվ 16-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ ԿԳ/13-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԱՐՏՈՒՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Սարգսյանի, Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, Քննության առնելով փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին (արտոնագիր թիվ 939) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը (արտոնագիր թիվ 939) 2015թ. հուլիսից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 294-Ա/ԿԳ-16139 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Սամվել Արտուշի Սարգսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16139):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 19:04-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պալատում առկա փաստաբանների ցուցակում և փաստաբանի անձնական գործում փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանի որևէ հեռախոսահամար և/կամ էլեկտրոնային փոստի հասցե առկա չէ: Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր, սակայն փոստային ծրարը ետ է վերադարձվել «Տեղափոխված» նշումով: Պալատի աշխատակազմը փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 13.01.2017թ. թիվ 2 (6523) համարում հրապարակելու միջոցով:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.10.2009թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.10.2016թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանն ունի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հուլիսից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 03.10.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Սամվել Արտուշի Սարգսյանը փաստաբանական գործունեության թիվ 939 արտոնագիրը ստացել է 24.10.2009թ.: Սամվել Արտուշի Սարգսյանի նկատմամբ 2009-2016թթ ժամանակահատվածում 7 կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ՝

- Խորհրդի 29.10.2012թ. թիվ 18ԿԳ որոշմամբ Սամվել Արտուշի Սարգսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը (անդամավճար վճարելու

- պարտականությունը չկատարելու հիմքով) կարճվել է:
- Խորհրդի 21.05.2013թ. թիվ 22ԿԳ-1 և 13.06.2014թ. թիվ 111ԿԳ-1 որոշմամբ Սամվել Արտուշի Սարգսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն.
 - Խորհրդի 24.10.2014թ. թիվ 171/1, 25.06.2015թ. թիվ ԿԳ/45-Ա և 25.03.2015թ. թիվ ԿԳ/45-Ա որոշմամբ Սամվել Արտուշի Սարգսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ խիստ նկատողություն.
 - Խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/140-Ա որոշմամբ Սամվել Արտուշի Սարգսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք (15.000 ՀՀ դրամ).

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի

գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Սամվել Արփուշի Սարգսյանին (արտոնագիր թիվ 939) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սամվել Արփուշի Սարգսյանի (արտոնագիր թիվ 939) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ փուզանք 20.000 դրամ:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սամվել Արփուշի Սարգսյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան